ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 12 >> <<սեպտեմբերի>> 2017թ. N 105
ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2017 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Աղավնաձորի>> ԱԱՊԿ ՊՈԱԿ-ում անցկացնել 2016 թ.-ի բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Խիկար Խաչատրյանի՝ աշխատանքային խմբի ղեկավար և գլխավոր մասնագետ Հասմիկ Ավետիսյանի կողմից:
2. Խմբի աշխատանքներին մասնակից դարձնել վերոհիշյալ ՊՈԱԿ-ի տնօրենին և հաշվապահին:
3. Աուդիտի անցկացման ժամկետը սահմանել 5 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2017 թվականի սեպտեմբերի 13-ին, ավարտել 2017 թվականի սեպտեմբերի 20-ին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ